ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ք.Նոր Հաճըն, Հեռ. 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

N 2187
30 դեկտեմբեր 2025թ.

«ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ Պարոն Ղուկասյան

2025 թվականի հունվարի 17-ին Նոր Հաճընի համայնքապետարանի և «ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊ ընկերության միջև կնքվել է Նոր Հաճընի համայնքի Մրգաշեն բնակավայրի կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների կատարման «ԿՄՆՀՀ ԳՀԱՇՁԲ24/54» ծածկագրով գնման պայմանագիրը, որի 1.3 կետով սահմանվում է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **համաձայն աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի՝ Հավելված 2: Սակայն ընկերությունը մինչ օրս չի ավարտել աշխատանքները: Պատվիրատուի կողմից տրվել է նաև լրացուցիչ ժամկետ / 10 օր/ աշխատանքները ավարտելու համար: Սակայն ընկերությունը մինչ օրս չի ավարտել աշխատանքները,** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում ենք, որ **«ՊՐՈՍՏՐՈՅ»** ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի դրույթները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-երդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Համայնքի ղեկավար՝ **Գագիկ Մաթևոսյան**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ՝ Ս. Բաղայան